



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

U-35

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԻԿԵԱՆՑ.

ՄԱՐՈՒ ԱԼԲՈՄԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐԸ Է 20 ԷԿՅԵԿ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒՆ ԱՒԵՏԻՍ ՄԷԼԻՔՈՄԵՆՆ ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

891.99
Մ-29

6 NOV 2011

891.99
U-35
my



საქართველოს მწიგნობრობის ეკლესიის

შԱՐՈՒ ԱԼԲՈՄԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինն է 20 կոպեկ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԻՍ ՄԷԼԻՓՈՄԵԱՆ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ.

Տ Փ Խ Ի Ս

Ելեբրատիպ Վրաց Հրատ. Ընկ. | Электронпеч. Груз. Изд. Т—ва.
Большая Ванкская улица.

1903

181

1001
2536


Дозволено Цензурою, г. Тифлисъ, 4 января 1903 г.

ՍԻՐՈՒՀՈՒՍ ԱԼՐՕՄՈՒՄ.

—
 Սիրուհուս աչեր, սիրալի աչեր
 Դուք սրտիս նման ծովի ալիքներ,
 Քանի խօսում էք ինձ հետ ալեկոծ՝
 Ինչո՞ւ չէք լսում իմ լացս ու կոծ.
 Ինչո՞ւ էք ինձնից դուք սէր աղերսում,
 Եւ ազահաբար սիրոս թափանցում,
 Եւ երբ որ սիրոյ բուռն տենչանքով—
 Մօտենում եմ ձեզ ահ ու երկիւղով,
 Հենց բարեում եմ ես անհամարձակ,
 Զգում եմ գլխիս տեղումէ կրակ:

*
* *

Ես տեսայ գողտրիկ
Քո սև սև աչեր,
Ցող վարդի նման
Արցունքի շիթեր,
Այնտեղ կարգացի
Սիրոյ աղերսանք,
Ես տեսայ այնտեղ—
Դառնացած քո կեանք.
Ուզեցի սիրել,
Քեզ պաշտել սրտով,
Դու չգիտէիր...
Բայց ան ես ինչով



Կամ ի՞նչ բառերով
Դիմաւորէի
Քեզ, երբ զգացմունք
Ես էլ չունէի.
Ժպիտ ու երգեր,
Տաք սիրտս փափուկ,
Հեծեծանք՝ անգամ
Ինձ խորթ արտասուք,
Ես ծախել էի
Կոյսին դաւաճան,
Դեռ նոր սթափուած
Քնից մանկական.



Այժմ ուզում ես
Որ քեզ նուիրուեմ,
Եւ կեղծ երգերով
Միշտ շողօքորթեմ.
Բայց ան չեմ կարող
Սուտ սիրով սիրել,
Անողորմաբար
Քեզ դաւաճանել.
Գնա հայ աղջիկ,
Ուրիշն փնտրիր,
Քո սէզ աչերով,
Նրան հմայիր.



Կանաչ պարտիզում
Ջերմեռանդ աղօթք,
Միշտ վերառաքիր
Դու սիրաբորբոք.
Եւ երբ պատկերս
Քո մտքից անհետ
Ձնջուի՝ ես այն ժամ
Կլինեմ պօէտ:



Մ Ա Ր Օ-իս.

Ես ցանկանում եմ որ իբր յիշատակ—
 Իմ խօսքս ապրի քնքոյշ կրծքիդ տակ,
 «Թէ քեզ սիրել եմ օ՛ կոյս աննման,
 Եւ պիտի սիրեմ մինչ ցուրտ գերեզման»:
 Եւ թէ այս խօսքս սրտիցդ ջնջես,
 Այբօմիդ խորքում նրան կգանես:



Խաւարի՛ր շուսիկ.

—Գիշերուայ ընկեր, լուսիկ լամպարիս,
 Տես ինչպէս շուրջդ մի զեռուն կտրիճ,
 Անգոր թւերով պտոյտ է գալիս,
 Բայց դու կրակ ես—մի հուր սպանիչ.

—Ինչո՞ւ ես ասո՞ ճառագայթներով
 Նրան ստիպում քեզնով հրապուրուել,
 Եւ ինչո՞ւ նրան, այն խեղճ զեռունին
 Դու արգելում ես վանդակդ մտնել.

—Տես ինչպէս է նա երերում, տանջում,
 Կարծէս համբուրում է քո հուր վանդակ,
 Այս գիտեմ, գիտեմ միայն մի վայրկեան,
 Եւ նա պիտ այրուի. քեզ համար կատակ.

—Լուսիկ դու գիտես որ իմ վեներան
Քարշող զօրութիւն մի քեզ պէս ունէր,
Նա քեզ պէս գիտէր—տանջել անսահման,
Քեզ պէս հրապուրել ու ոգևորել.

Մն թող ինձ նայեմ քո հզօր լոյսին,
Յիշեմ կորցրած վաղեմի իմ սէր,
Ինչպէս ես զեռուն էի մի չնչին,
Իսկ նա ահարկու ունէր հօւր աչեր.

—Ախ այն աչերը, կրակոտ փոքրիկ
Քանի հարուածներ տուին իմ սրտին,
Ախ այն աչերը, թող յիշեմ լուսիկ,
Որոնք ողջ կեանքս թունաւորեցին.

—Օ ես սոսկում եմ, մի գործիր սճիր,
Բայց դու չես լսում, տես նա անմեղիկ
Սրդեն խանձուում է, էլ մի առկայծուիր.
Լաւ է սրտիս պէս «խաւարիւր լուսիկ»:

ՅՆՈՐՔ ԽՂՃԱԼԻ.

—Բնութեան գրկում, կանաչ հովիտում,
Ձորս կողմս խաւար դաժան մթութիւն,
Ես նրա անունն էի մրմնջում,
Միակ մխիթար իմ տկար հոգուն.

Ուրուականի պէս—տեսնում էի ես
Վարժես բաց օդում հեռու ինձանից,
Նա սլանում էր գնտակի նման,
Վարժես փախչում էր իմ սառած սրտից.


—Ես հետևեցի. ճեղքելով խաւար
Սկսայ վազել մէջ սուր քարերի,
Վերջապէս հասայ, գրկեցի ամուր,
Բայց դա երազ էր, «ցնորք խղճալի»:

ԴՈՒ ՉԵՍ ԿԱՐՈՂ.

Դու չես կարող երգել հանգիստ,
ձեմել, ժպտալ ու ննջել,
Սիրաբանել ճիւղի հետ,
Քանի վիճակս է անել.

Եւ կիսամեռ ալեկոծուած՝
Սիրատոչոր ինձ նման,
Դու չես կարող յիշել կորած,
Նախկին սիրոյ լաց-կական.

Ախ այդ լացը—նա չէ կարող
Տխուր ցայտել քո սրտից,
Իբրև մի երգ՝ սիրտ մորմոքող,
Երգ ցաւատանջ լի կսկիծ.



—Դու հանգիստ ես, դու չես հրճուում
Այլ ևս իմ տողերով,
Այժմ հռչակ, փառք ես փնտրում
Դու ինձ վրայ ցաւելով.

—Սակայն իզո՛ւր—ինձ մի խղճար
Ես չեմ շարժում քո քար գուլթ,
Գիտեմ, երգս էլ քեզ համար,
Աւելորդ է անօգուտ.

—Դու չես կարող երգել հանգիստ,
ձեմել, ժպտալ ու ննջել,
Սիրաբանել փեսայիդ հետ,
Քանի վիճակս է անել:



ՄԻ ԿԱԹԻԼ ՄԻԱՅՆ.

Ես չեմ հաւատում թէ պիտի դայ օր
Որ դու վերստին ինձ դրկես ամուր,
Եւ յիշատակները՝ դառն անցեալի
Դարձնես լսկ երգ մի արտասուալի.

Այլ հաւատում եմ որ շուտով, դեռ վաղ
Դու պիտի տեսնես մի անշուք դադաղ,
Եւ որ պիտ տանեմ ինձ հետ գերեզման,
Քո ջերմ արցունքից «մի կաթիլ միայն»:




ԱՐՇԱԼՈՅՍԻՆ.

—Ախ արշալոյս դու յիշում ես
Այն առաւօտը սիրուն,
Երբ իմ միակ մաղթանքս քեզ
Վեր ուղղեցի երեւուն.

—Ես պատմեցի սիրոյս արկած
Ծաղիկ կեանքս երջանիկ,
Եւ հայացքս քեզ սեւեռած,
Ողջ բովանդակ իմ գաղտնիք.

—Եւ դու կարծես նախանձեցիր
Իմ երջանիկ վիճակիս,
Եւ դրա հետ փայփայեցիր,
Ինձ ասացիր «չտարուիս».




—Մի ձիգ տարի ան արշալոյս
Սողաց անցաւ այն օրից,
Այժմ տխուր կորած իմ յոյս,
Հանդիպում եմ քեզ նորից.

—Այժմ խաբուած ու վիրաւոր
Անիծում եմ ես մեկին,
Որը իւր նենգ հայացքներով,
Հարուած տուեց իմ կրծքին.

—Ախ էլ ինչո՞ւ գլխիս վերեւ
Դու փայլում ես արշալոյս,
Ես կորած եմ, մնաս բա՛րեւ
Կեանքիս աղօտ վերջալոյս:

*
* *

—Մթնեց աշխարհը, խաւարեց արև,
Երկինքը ծածկուեց շերտերով սև-սև,
Լռեց ամեն ինչ, մեռաւ ընութիւն,
Ամբօխի վրայ իջաւ մի խոր քուն.
Դրսից լսում էր վայնասուն բողոք,
Դաժան մթութեան ընդդէմ անողոք,
Բայց իմ խրճիթում լոյս էր ու անդորր,
Եւ հենց այդ լոյսը դու իր փառաւոր:



*
* *

—Դու ճգնում ես որ անպատճառ
Նայեմ քո հուր-աչերիդ,
Քո քայլուածքին և թաւ կամար—
Աղեղաձև յօնքերիդ.

Ինձ ցնցում ես և թագցնում
Հովհարի տակ դեմքդ գեղ,
Բայց զգում եմ որ ոչ ժպիտ,
Ոչ էլ հեգնանք կայ այնտեղ.

Զգում եմ որ հովհարիդ տակ
Զոյգ աղբիւրներ են բղխում,
Նրանից ցած զոյգ շրթունքներ
Սիրոյ բողոք մրմնջում.

Եւ կատաղի քո կրծքի տակ
Մի հրդեհ է բռնգւում,
Մի ալեկոծ օվկիան անտակ,
Կրակի հետ մարտնչում.

—Ոչինչ... թող մեզ ցաւը տանջէ,
Թող ես մնամ օվկիան,
Գուցէ մի օր հրդեհն հանգչէ,
Դու ինձ կտաս անդորր կեանք:

*
* *


Վառվռուն կայտառ դուք փափկասուններ,
Որ միայն գիտեք թակարդներ լարել,
Եւ որսորդի պէս մագնիս—աչերով
Շղթայել սիրոյ դիւթիչ օրօրով...
Ինչու չէք տեսնում որ մեր աչքերում
Երբեմն անշեջ մի կրակ է վառւում,
Սերտ կապակցութիւն, յաւետ միութիւն,
Ախ այդ կրակն է ձեզ ազդարարում:



Ես չեմ պօհտ, չունիմ յարդանք
 Որ քեզ զօհեմ իմ քնար,
 Ոչ կուսակրօն որ ոտքիդ տակ
 Զգեմ գլխիս սև վեղար:

Ես չեմ ռազմի հերոս կրակ,
 Որ դաշոյնս պողպատից,
 Սիրոյդ համար՝ դափնի, պսակ,
 Դէն ձգէի ինձանից:

Այլ վրիժառու եմ սոսկալի
 Եւ պիտ պոկեմ կոկոն֊փակ,
 Ախ իմ կեանքիս փոթորկալի
 Կխաւարէ արեգակ:




ՍԻՐՈՅՍ ԺԱՄԵՐԸ ԱՆՅԱՆ, ԳՆԱՅԻՆ.

Սիրոյս ժամերը անցան գնացին
 Երկրի երեսին ինձ որը թողեցին,
 Ես նրանց հասնել չեմ կարող բնաւ,
 Նրանք ինձ մահին յանձնեցին գրաւ:

Իզուր իմ մտքում անքուն գիշերներ
 Ռեզում եմ գտնել նորից կորած սէր,
 Իզուր եմ ապրում, իզուր եմ երգում,
 Նախկին սիրահարը ինձ ճանաչում:

Ախ նա անբաժան իմ մտածմունքից
 Կոյսը հեռու է հեռու ինձանից,
 Ել չեմ գրկելու ես նրան կրկին,
 Սիրոյս ժամերը անցան գնացին:



ՍՍ
 1001
 2536



ՆՐԱ ՄԱՀՃՈՒՄԻ ՄՕՏ.

Ննջիր օ՛ կոյս քո աչերին
 ես կհայցեմ քունն անոյշ,
 Տխուր երգով գիշերային,
 Կլցնեմ սիրտդ քնքոյշ.

Մնբուն, յոգնած, իբր պահապան,
 Քեզ կհսկեմ ողջ գիշեր,
 Որ չար դեռ մարդանման,
 Նա քո վզով չփարուեր.

Մինչև հասնե լուսաբացը
 երազ ու քուն չբանան,
 «Ափսոս ափսոս իմ սիրածը»
 Մրմնջալով հեռանամ:



Ալբումում.

Պ Օ Է Տ Ի Մ Ա Հ Ը.

Քաղաքի սիրուն, շքեղ փողոցում,
 Մի անշուք գաղաղ էր առաջ շարժում,
 Եւ մի քանի մարդ՝ անփոյթ ու խաղաղ,
 Հետևում էին գլխիկոր դանդաղ.

Եւ լայնամորուք, հաստավիզ տերտեր
 Կարծես չէր ուզում կրօնական ծեսեր,
 Եւ ձիգ ալօթքներ քրիստոնէական,
 Կատարել, տանել նրան գերեզման.

Բայց և հաղիւ հազ, համր ու անխօս
 Դիակն հասցրին դէպ խորը սև փոս,
 «Հոյ գարձցես տղա» և տանեակ թիէր.
 Պատրաստում էին նրան թագյնել.

Հենց այդ ժամանակ, աչեր կոկոնած,
Մօտ վազեց մի կոյս արցունքից եփուած,
Հիժբաղդ պատանի օ խեղճ բանաստեղծ՝
Բառերն ասելով դագաղը գրկեց...

«Իժբաղդ բանաստեղծ» այս ու այն կողմից
Լսուեց շշուկներ մարդկանց շարքերից,
Իսկ նա՝ սգաւոր կոյսը խոր սրտից,
Վայում էր «Ափսո՛ս ցաւատան՛ջ երգիչ»:

Պօէտի մահուան լուրը տարածուեց,
Դերեզմանանոցն ամբօխը լցուեց,
«Դա վավաշոտ էր, հպարտ, աւազակ»
Սկսան թափել անվերջ հայհոյանք...

Նրան թաղեցին. տարիներ անցան
Պօէտի վրայ փայլեց մի արձան,
Եւ նոյն ամբօխը մարմարիօնի տակ,
Ծնկաչոք, համր զլում էր հրճուանք:

Ն Լ Վ Ն Ր Դ Ը.

Կար ժամանակ երբ ալ վարդը
Իմ առաջիս էր բուրում,
Նա կորզում էր սրտիս դարդը,
Ուրիշ մէկին ընծայում:

Իսկ ան այժմ՝ նոյն ալ վարդը
Ուրիշին է պատկանում,
Արդեօ՞ք դեռ շատ նա իմ սիրտը
Պիտ տոչորէ անդադրում:

✱
✱
✱
(Օր. Մար... Մար...-ին).

Ես ուզում եմ յարուցանել
Մի կօլիզիայ ըս սրտում,
Որ ինձ նման տխուր դու էլ,
Ախ-վախ քաշես այս երկրում:

Բայց ի՞նչ անեմ երբ չեն ազդում—
Քեզ ողբալի իմ երգեր,
Երբ կարեկցի դու չես ուզում,
Վրաս հայացքդ ուղղել:

Դու օրնիրուն ստիպում ես ինձ
Պատուհանիդ տակ տրտում,
Երգել անվերջ սիրոյ թախիժ,
Վարդը փնտրել աւազում:

Ախ իմ երգս, ես զգում եմ
Նա սուր փուշ է քեզ համար
Բայց ի՞նչ անեմ—երբ ապրում եմ
Լսկ քեզ համար, ախ յամառ:

Այդ լաւ գիտես, բայց ուզումես
Վամպիրի հետ միանալ,
Որովհետեւ դու գերուած ես,
Քեզ իշխումէ սսկու փայլ:

Բայց և այնպէս երկնքի տակ
Ես չեմ կարող շունչ քաշել,
Մինչ չտանեմ վեհ յաղթանակ,
Մինչ մի կեանք չդառնայնեմ:




ՍԼԲՕՄՈՒՄ.

Մեր ժամանակը, կեանքը լաւ կամ վատ,
Փոխում են ամբողջ էութեամբ մարդկանց,
Մէկին տալիս են ոսկի, գանձ անհատ,
Միւսից խնայում անգամ կտոր հաց:

Եւ ախ այս դարում, միայն ընդունուած
Կրեսոսին պաշտել, խեղճին ապտակել,
Ինչո՞ւ կուրծք ծեծել, կանչել լո՛ւր Աստուած,
Երբ կարելի է թշուառին օգնել:

«Թշուառին օգնել» աղլիկ անմօռաց
Թող ալբօմիդ մէջ մնայ դրօշմուած,
Եւ ով է դիտում թէ մի օր փոխուես,
Մի ազնիւ ընթացք այնտեղ կդանես:



Ալբուում.

ԼՕՌԵՑԻ ՊԱՆԴԻՍԻ ԼԱՑԸ.

(Պուգիկայ)

Վաթանիս կարօտ դու քանի կրակ—
Դադ դնես սրտիս մահչամի տեղակ,
Քանի եաղու տաս չոր հացիս կերած,
Սիրտս փթոթես առանց էն էրած.

Վարամ ու դարդը եանի շատ պլտի
Ղարբբիս սիրտը կապի խրտըտի,
Եա քնած տեղս զարզանդ էրազնին,
Ծնտ պրտեն լցնիլ աչկերս արին.

Ա՛խ Դիւրջուտանա կապտաուն սարեր,
Թող մտիկ անեմ տենեմ աշխարհներ,
Բալի թէ ընդի վաթանս քթնեմ,
Ու նշանածիս տաք պաչեր դրդեմ.

Բալի իմ կարօտ ազին ու ապին,
Բևուտկն ըլէն աչկիս աղաքին,
Բալի ինձ քաչեն թեեր տան թուչեմ,
Սիրած ֆողըմը մուրազս առնեմ...

Աման ինչ անեմ, որ շուրը ընգնեմ
Եարիս պատկերքը մտկիցս ջնջեմ,
Եա կամ ինչ անեմ—որ ծնողի լաց
Հեչ իմանայ ոչ սիրտս չորացած.

Սարեր այ սարեր ես լաց եմ ըլլմ,
Ձանս ցաւըմա, սիրտս մղկտըմ,
Աման այ սարեր դչի թեերով,
Եարիս զրգեցէք—պաչըս ու բարով:
Թող իմ ապրուտը նրանք իմանան,
Հիւանդ ջանիս հմա թող անեն շիւան,
Բալի սե օրիս անեն մի ճարդեղ,
Թող նրանք ընդի հալուեն ես ըստեղ,


Չկել որ մի գուռ բաց անի Աստված,
Ու հովութին տայ իմ սրտիս էրած,
Չկել թաղադան դամ օթդ չնչեմ,
Կարօտս առնեմ մի կուշտ լաց ըլլեմ:

#

Ի՞նչ է մեր կեանքը՝ եթէ ոչ պարտեզ
 Որտեղ աճում է և ծաղիկ և փուշ,
 Քանի մի ամիս՝ խօսում են կարծես,
 Նրանց շոյում է զեփիւռը քնքոյշ:

Բայց շուտով՝ համնում է ցուրտը դաժան,
 Կետինը ձմրան սառուցով ծածկում,
 Ոչնչանում են ծաղիկներն անման,
 Եւ դրա համար ոչ-ոք չէ ցաւում:

Իսկ երբ մի ըմբոստ՝ հաճոյքի համար՝
 Ճիւղից անշատում է կոկոն մատաղ,
 Որքան ցաւալի՛ նա անգլթաբար
 Նազելի թփին տալիս է մի դաղ:



ԵՍ Է՛Լ ՍԷՐ ՍԳՆԱՄ * ԴՈՒ Է՛Լ ՍԷՐ ՍԳՆՅ

— Արի վարդ այտերդ դիր այտերիս,
 Թող սիրոյ ցաւը մի հեղեղի պէս
 Աւատ ու պղտոր ցայտէ դէպի դուրս,
 Որ դուցէ երկինքը կարեկցէ մեզ:

Էլ մի անխտան նայիր աչքերիս,
 Չէ որ մենք այժմ մենակ ենք—անտէր,
 Եկ կուրծքդ ամուր սեղմիր խ՛ կրծքիս,
 Այնտեղից ժայթքէ մեր սիրոյ բոցեր:

Եկ, մտեցիր ինձ, միասին սգանք,
 Ես էլ սէր սգամ, դու էլ սէր սգայ,
 Անընդհատ վայենք խորտակուած մեր կեանք,
 Մինչև օրհասի վերջին ժամը դայ:




*
*
*

Գուք կախարդիչ սև սև աչեր
Ինչո՞ւ ինձ հրապուրեցիք,
Ինչո՞ւ տուիք արծուի թևեր,
Ինձ գործելու մեծ թռիչք.

Եւ դոցա հետ ինչո՞ւ տուիք
Սրտիս նետի հարուածներ,
Սպանող աչեր ինչու թողիք
Այս աշխարհում ինձ անտէր.

Արդեօք գու՞նամ մինչի երկինք
Հեկեկալով անիծեմ,
Թէ հեռանամ աղնիւ շաւղից,
Չեզանից վրեժս լուծեմ:

*
*
*

Ես նայեցի երկինն տխուր
Սրտիս նման սևացած,
Չյաւեցի, գիտէի որ
Նա կպարզէ անկասկած.

Բայց կպարզէ՞ և իմ սև սիրտ
Կթօթափէ՞ իւր ցաւեր,
Թէ վիճակուած է նրան ընդմիշտ
Կորած սիրով տոչորուել:



ՄԱՐՈՒ ՊԱՏԿԵՐԸ.

Մերթ քո պատկերը սեղմում եմ կրծքիս,
Մերթ համբոյրներով շերմաշերմ ծածկում,
Եւ աչերիդ մեջ կսկիծով կարծես—
Վաղեմի սիրոյ մըրիկը կարդում:

Եւ հարցնում եմ Մարո՞ միթէ ես
Անարժան էի սիրովդ յուզուել,
Չնի թէ դու էլ խաբուելով ինձ պէս,
Թունասր սիրոյ բաժակն ես ըմպել:



*
* *

Մարդիք մարդիք թողէք երգեմ
Տանջուած հոգուս դոհացում,
Եւ թառամած սէրս պատմեմ
Տաք սրտիցս բաբախուն.

Գիտե՞ք որքան խոցերի եմ
Ես տեղ տուել կրծքիս տակ,
Գեթ մի բոպէ թողէք պատմեմ,
Պատճառները անյատակ.

Դեռ տասն և եօթ եմ գլորել
Իմ յետևից սոսկ տարիք,
Բայց կնճիւրը դեմքս է ծածկել
Կեանքի զգում եմ կարիք...

Սիրում էի ես հուր սիրով
Այն պաշտելի հայուհուն,
Լոկ մի տարի և նա շուտով—
Ինձ կտակեց դառնութիւն.

Ով ինձ գրգեց դէպի յանցանք,
Դեպի սիրոյ լայն օղակ,
Միթէ՞ ճնողացս երախտիք
Ուսուցիչս դաստիարակ.

Օ՛ ոչ, այլ այն շրջանը դեղիս—
Իբրև անդունդ մի խոր ձոր,
Որտեղ սիրաս անփորձ, անմեղ,
Զգաց թոյնը զօրաւոր:

Այբօմում.
ՅԱՆԿՈՒԹԻՒՆ.

Մինչ երբ տէր Աստուած արտասուք թափեմ,
Սեղանի առաջ գրչիս հայհոյեմ,
Գրի նախանձով մինչ երբ կուրացած,
Պիտ մնամ դաժան, սիրտս էլ սեպած.

Ես չեմ ազերսում տէր Աստուած ոչ փառք,
Ոչ հարստութիւն, պատիւ ու հռչակ,
Լոկ ցանկանում եմ զօրութիւն գրչիս,
Որպէսզի պատմեմ մըրիկը սրտիս:



*
**

Գու մեղմացիր, օխ սիրահեղձ
 Հոգոյս ամուր կապանքներ,
 Եւ դուք աչքեր թօթափեցէք
 Դառն արցունքի կայլակներ.

Նոյնպէս և դու մաշող սև վիշտ
 Մի դալարուի կրծքիս տակ,
 Մի բաբախի սիրտ իմ խոցուած
 Մարիւր և դու սէր... կրակ:

Էլ մի խօսիր, մի հեծկտայ,
 Գու իմ քնար գեղգեղան,
 Եարս չկայ—վայ իմ կեանքին
 Թող լուռ տանջուեմ. չիմանան:

*
**

Օ սառն է սիրտդ, նա էլ չէ զգում
 Սիրավառ երգչիս հզօր հառաչներ,
 Ախ երբ պիտի ես վստահ կարենամ
 Դէպ կուրծքդ ուղղել սրտիս հուր կայծեր—
 Որ նա տաքանայ.

Որ հետզհետէ իբր անշէջ հրդեհ,
 Վառուի կրակը իմ դէպ քեզ ուղղած,
 Որ դու էլ ճշաս, մխաս, հառաչես,
 Ինձ նման տխուր կանչես լոկ Աստուած—
 Սիրտս զովանայ.

Մինչև որ անցնին տանջալից օրեր,
 Գաս ինձ գրկելու էլ չլի թախիծ,
 Երդուես յաւիտեան սիրել ջերմ, անկեղծ,
 Որ նախկին հզօր-մաշող հրդեհից—
 Մոխիրը մնայ:

**

Մերեմուդա.

Անգուլթ աղջիկ, սիրուն վարդիկ
Դու ալ վարդիկ մշտաբոյր,
Տանջող էակ, քնքոյշ աղջիկ,
Ասայ ին՞չու ես տխուր.

Էր սրտամաշ սերենագոս
Չէ տոչորում սիրտդ քար,
Չէ որ իմ շերտ հաւատամքը
Դու ես միայն, դու յամառ:

Դուցէ ընկերս իմ Հերկուլէս
Քո ամբոցի առաջին,
Ինձ տապալեց որ իշխէ քեզ,
Քո բաբախող տաք սրտին;

Սակայն միթէ՞ ոյժը կոպիտ
Իմ քնարի հնչիւնից,
Տամնապատիկ նա քո սրտիդ
Դիւրալի է ու անբիծ.

Աւանդ իմ սէր. նա կատաղի
Քեզ հմայեց մի օրում,
Դու մոռացար աղիւլեղի,
Լաց ու կոծս օրն ի բուն:



ԻՄ ՎԱՐԴԸ.

Ախ այն խարդախ հոգեւոյնը
Նա իմ վարդը գողացաւ,
Ազնութեան դիմակի տակ
Նրա պաշտպանը դարձաւ.

Եւ օ սարսափ. գեղ կոկոնը
Թոշնեց նրա ձեռքի մէջ,
Հրեշի շունչը կայծակնահար,
Նրա բոյրին տուեց վերջ.

Ես խորքերից՝ խոցոտ սրտիս,
Հառաչեցի, սգացի,
Ես արցունքով նրա դալուկ
Այ թերթերը թրջեցի.

Շատ լացեցի. և բիւր վարդեր
Ես ստացայ անհամար,
Սակայն աւանդ նրանք օտար
Ու խորթ էին ինձ համար:



ԴԵՌ ՉԵՄ ԱՍԻԼ...

Դեռ չեմ ասիլ ես՝ որ սէրս դէպ թեզ
 Հասնում է մինչև խելագարութեան,
 Դեռ չեմ ասիլ որ՝ համբոյրդ քաղցրիկ
 Ինձ մի նոր կեանք է տալիս աննման:

Դեռ չեմ ասիլ թեզ՝ որ երբ քնքոյշիկ
 Սեղմում եմ ձեռքդ իմ ասիերիս մէջ,
 Արիւնս է եփուում և կարծես աղաս
 Մեծ եմ ամենքից պիտ ասրեմ անվերջ:

Դեռ չեմ ասիլ թեզ՝ որ զգացմունքներ
 Չերմ սէրս էլ եմ քեզնից թագցրել,
 Լոկ կասեմ Վնդճւթ ինչու մինչ այսօր
 Չես կարողացել մի սիրտ գուշակել:



Ս Օ Ն Ե Տ.

Երեկոյ էր. հորիզոնը վարդագոյն,
 Լերկ սարերի գագաթները կապտաուն,
 Հով զեփիւռը դեմքս շոյում էր քնքոյշ,
 Եւ հեռուից լսում էր ճ շատ անոյշ
 Մի դայլայլիկ որ ուշք ու միտք էր գերում,
 Արձագանքը հեռո՛ւ հեռո՛ւ տարածում:
 Եւ ան սրբան հոգեմաշ էր ու գիւթող,
 Իսկ ես լսիկ սայլակիս մէջ զօղանջող,
 Յառաջ-յառաջ երկու բողբ դեռ չանցած,
 Տեսայ երգչին, տեսայ վարդը գալկացած:



Վ Ե ր ջ Ի ն ն ա մ ա կ,

Մ Ա Ր Օ - Ի ս :

Վերջին անգամ գեթ բեռեր
Սահող հայացքդ թերթիս,
Կարգայ գրած իմ այս տողեր
Մեծ գանգատը սև սրտիս.

Վերջին անգամ գեթ հեղնանքով
Յիշիր տուած քո խոստում,
Ապա ննջիր խարդաւանքով
Քո փեսայի պաղ գրկում:

Իսկ ես կերթամ օտար երկիր
Սիրոյ դառն հեծեծանքով,
Եւ կքաւեմ յանցանքս օ սէր
Այնտեղ խեղտող արցունքով:



„ԱՆՔՈՒՆ ԳԻՋԵՐՆԵՐ“


(Մուգիկայ).


Անքուն գիշերներ՝ երգել եմ անհատ
Պատուհանիդ տակ մաշող սերենադ,
Բայց չէ թափանցել ուխտագանց աղջիկ,
Իմ հեծեծանքը քո անդորր սրտիկ.

Անքուն գիշերներ՝ իմ պատշգամբից
Օդային համբոյր ու սիրոյ կսկիծ,
Լուսնի միջոցով քեզ եմ ուղարկել,
Իսկ դու յանդուգն ես ինձ անուանել.

Անքուն գիշերներ՝ ես նամակներով
ձգնել եմ գուլթդ շարժել արցունքով,
Բայց դու դողդոջուն իմ գրչիս տողեր,
Գեռ չկարգացած մի կողմ ես նետել.

Անքուն գիշերներ՝ անվերջ անընդհատ
Երգել եմ տխուր մաշող սերենադ,
Անքուն գիշերներ անդորր գիշերներ,
Պատուհանիդ տակ սէր եմ երազել:





Խ Ո Ս Տ Ո Ւ Մ .



Ախ էլ չեմ կարող ըր սուղ արբօմում,
 Թափել փշրանքներ պահուած իմ սրտում,
 Բայց խոստանում եմ ընծայել սրտանց,
 Շուտով մի նորը, արցունքից կազմած:



Մկրտիչ Մարիկեանց.

1902 թ.

Գիւլաքարակ:

«Ազգային գրադարան»



NL0350495

42744